

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ**



**ԿԱՐԳ
ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ-2019

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

ԱՐՁ. No 2, ԿԱՅԱՅԱԾ 13.05. 2019 Թ.

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ՝

_____ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



**ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ
ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը մշակվել է համաձայն ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 21.07.2010թ. № 1167-Ն «ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին» հրամանի և հրամանի հավելվածի:
2. Սույն փաստաթուղթը սահմանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում (այսուհետ՝ Ակադեմիա) հետազոտողի գիտակրթական ծրագրով ասպիրանտուրայում (առկա, հեռակա) և հայցորդական հիմունքներով ուսումնառության և գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման կարգը:

**II. ԱՍՊԻՐԱՆՏԻ (ՀԱՅՅՈՐԴԻ) ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԱՇԽԱՏԱԾԱՎԱԼԸ**

3. Ակադեմիայում ասպիրանտուրայի (հայցորդության) կրթական ծրագրով ուսանողի տարեկան բեռնվաճությունը սահմանվում է 1800 ակադեմիական ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտային միավորի:
4. 1 ECTS կրեդիտը համապատասխանում է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) բեռնվաճությանը:
5. Առկա ուսուցման համակարգում ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, կիսամյակի տևողությունը՝ 20 շաբաթ, որոնցից 16 շաբաթը՝ տեսական ուսուցում, 2 շաբաթը՝ անհատական պլանի կազմում և հաստատում, 2 շաբաթը՝ քննաշրջան:
6. Հեռակա ուսուցման և հայցորդության համակարգում ուսումնական տարվա տևողությունը 32 շաբաթ է, կիսամյակի տևողությունը՝ 16 շաբաթ, որոնցից 4 շաբաթը՝ տեսական ուսուցում, 8 շաբաթը՝ ինքնուրույն աշխատանք, 4 շաբաթը՝ քննաշրջան:
7. Առկա ուսուցման ասպիրանտի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվաճության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

8. Հետազոտողի գիտաուսումնական լրիվ աշխատածավալը կազմում է 180 կրեդիտ, ծրագրի տևողությունը՝ առկա ուսուցման համակարգում – 3 տարի, հեռակա ուսուցման համակարգում – 4 տարի, հայցորդության համակարգում մինչև 5 տարի:
9. Ասպիրանտն ուսումնական տարում պետք է ունենա.
 - 60 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն՝ առկա ուսուցման համակարգում (10% թույլատրելի շեղումով),
 - 45 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն՝ հեռակա ուսուցման համակարգում (10% թույլատրելի շեղումով),
 - 36 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն՝ հեռակա ուսուցման և հայցորդության համակարգում սովորելու դեպքում (10% թույլատրելի շեղումով):
10. Ուսման բարձր առաջադիմություն ունեցող ուսանողը որոշ դեպքերում սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ բեռնվածություն:

III. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԴՂԱԿԸ

11. Ակադեմիայում ասպիրանտի և հայցորդի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատման 5-բալանոց համակարգը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Գնահատման միավորը	Գնահատականը
5	«Գերազանց»
4	«Լավ»
3	«Բավարար»
2	«Անբավարար»
չն	«Չներկայացած»
ստ./չստ.	«Ստուգված»/«Չստուգված»

12. Ասպիրանտը վաստակում է ուսումնական պլանով սահմանված կրեդիտները միայն այն դեպքում, երբ նա տվյալ դասընթացի (մոդուլի) ամփոփիչ քննությունից (ստուգարքից) ստացել է դրական գնահատական («Ստուգված»):

IV. ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

13. Ասպիրանտը (հայցորդը) համարվում է առաջադիմող և փոխադրվում է հաջորդ կուրս, եթե նա ուսումնական տարվա արդյունքներով հավաքել է առնվազն 55 կրեդիտ (հեռակա ուսուցման և հայցորդության դեպքում՝ 30 կրեդիտ):

**Վ. ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

14. Ուսումնառության առաջին կիսամյակի 10 օրվա ընթացքում ասպիրանտը (հայցորդը) իր գիտական ղեկավարի հետ համատեղ լրացնում է իր անհատական ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանը, որտեղ հերթականությամբ, ըստ տարիների, նշվում են ծրագրի ուսումնական դասընթացները և հետազոտական կառուցամասով նախատեսած աշխատանքները՝ իրենց հատկացված կրեդիտներով:
15. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբի 10 օրվա ընթացքում ասպիրանտը (հայցորդը) իր գիտական ղեկավարի հետ համաձայնեցնում է տվյալ ուսումնական տարվա համար իր կամընտրական դասընթացների ցուցակը և համապատասխան մասնագիտական ամբիոնում ճշտելուց հետո ներկայացնում է այն ասպիրանտուրայի պատասխանատու անձին:
16. Անհատական պլանով նախատեսած տվյալ դասընթացներին (այդ թվում նաև կամընտրական) ասպիրանտի մասնակցության գրանցումը կատարվում է գիտահետազոտական կենտրոնում՝ մինչև կիսամյակի երկրորդ շաբաթվա վերջը:

17. Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր հաջորդ կիսամյակի սկզբում ասպիրանտը (հայցորդը) կարող է կատարել ուղղումներ և շտկումներ իր անհատական ուսումնահետազոտական պլանում՝ նախապես ստանալով իր ղեկավարի և ամբիոնի վարիչի համաձայնությունը:
18. Ասպիրանտը (հայցորդը) պատասխանատու է ուսումնառության իր անհատական պլանի ճշտության և ամբողջականության ապահովման համար:
19. Անբավարար քանակով տվյալ դասընթացի համար գրանցված ասպիրանտների (հայցորդների) դեպքում Ակադեմիան իրավունք ունի հետաձգելու այդ դասընթացի կազմակերպումը:

VI. ԾՐԱԳՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

20. Ուսումնական տարվա առաջին երկու շաբաթների ընթացքում գիտական ղեկավարը կազմում և ասպիրանտին (հայցորդին) է տրամադրում տվյալ ուսումնական տարվա հետազոտական աշխատանքների պլանը՝ իր ժամանակացույցով:
21. Ծրագրի հետազոտական կրթամասով նախատեսված աշխատանքների կատարողականը գնահատվում է

ատեստավորման միջոցով: Ատեստավորումը կատարում է գիտական ղեկավարը, որը լրացնում է ատեստավորման թերթիկը և ներկայացնում այն Ակադեմիայի գիտահետազոտական կենտրոն:

22. Գիտական ղեկավարի ստորորագրությամբ ատեստավորման վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում նաև ասպիրանտի (հայցորդի) անհատական պլանում:
23. Թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատումը և գիտական ղեկավարի նշանակումը իրականացվում են ուսումնառության առաջին կիսամյակում՝ ասպիրանտի (հայցորդի) ընդունման օրվանից ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում, համաձայն ՀՀ ԲՈԿ-ի «Ատենախոսության թեմայի հաստատման կարգ»-ի:
24. Համապատասխան ընթացակարգը ներառում է.
 - հնարավոր գիտական ղեկավարների հետ թեկնածուական ատենախոսությունների թեմաների ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների կազմակերպում մասնագիտացնող ամբիոնում,
 - թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի թեկնածության ներկայացումը մասնագիտացնող ամբիոնի հաստատմանը, գիտական ղեկավարի նշանակումը և հրամանագրումը:

- Ասպիրանտի (հայցորդի) գիտական ղեկավար կարող է լինել տվյալ բնագավառում գիտության դոկտորի աստիճան ունեցող մասնագետը, իսկ ԲՈԿ-ի թույլտվության դեպքում՝ նաև գիտությունների թեկնածուն:
- Ասպիրանտի (հայցորդի) տարեկան ատեստավորումն անցկացվում է համապատասխան մասնագիտացված ամբիոնի կողմից՝ ներկայացված հաշվետվության արդյունքներով:

Ատեստավորում չանցած ասպիրանտը (հայցորդը) ազատվում է ասպիրանտուրայից ռեկտորի հրամանով:

Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված ընթացակարգերի:

VII. ԾՐԱԳՐԻ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄԸ

25. **Հեղազոյողի** գիտակրթական ծրագրով սովորող ասպիրանտի (հայցորդի) ավարտական ատեստավորումը և աստիճանաշնորհումը կատարվում է համաձայն ԲՈԿ-ի կողմից ընդունված կարգի՝ համապատասխան գիտական խորհուրդ ունեցող ուսումնական հաստատությունում կամ գիտական հիմնարկությունում:

VIII. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Սույն Կարգը գործողության մեջ է դրվում 2019-2020 ուսումնական տարվանից՝ Ակադեմիայի հետազոտողի կրթական ծրագրով առկա և հեռակա հիմունքներով ուսումնառության համար դիմած և հրամանագրված բոլոր ասպիրանտների և հայցորդների համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

I.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3
II.	ԱՍՊԻՐԱՆՏԻ (ՀԱՅՑՈՐԴԻ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԾԱՎԱԼԸ.....	4
III.	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԴՂԱԿԸ.....	5
IV.	ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ.....	6
V.	ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՐԹԱՄԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....	7
VI.	ԾՐԱԳՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ.....	8
VII.	ԾՐԱԳՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ.....	10
VIII.	ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	10

